Հ Ա Շ Վ Ե Տ Վ ՈՒ Թ Յ ՈՒ Ն

քաղաքացիների ընդունելության և դիմումների, բողոքների ու առաջարկությունների վերաբերյալ
31.03.2013թ. դրությամբ

1. Ստացվել են դիմումներ ընդամենը՝ 7449
որից՝

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
առաջարկություն	523	7.2
դիմում	6540	87.7
բողոք	386	5.1
կրկնակի	473	6.3
կոլեկտիվ	127	1.7

2. Վերցված է վերահսկողության ընդամենը՝ 1873

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
դիմում	1269	67.7
բողոք	604	32.2

3. Ըստ հարցերի բնույթի

	ԹՎԱՔԱՆԿԸ	% ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅԱՄԲ
բնակարանային	229	3.1
կոմունալ-կենցաղային	59	0.7
շինարարական	14	0.1
արդձեռ (տրանսկապ)		
գյուղատնտեսական	6	0.08
բնութ. պահպանութ.		
առևտրի		
կենսաթոշակային	26	0.3
առողջապահության	57	0.7
կրթական և մանկ. հիմն.		
գիտութ. կուլտուրա	5	0.06
ֆինանսական	4045	54.3
օրենսդրական	112	1.5
քաղ. և որդեգրման հաշվառման		
աշխ. և աշխատավարձի	505	6.7
ապարատային		
այլ հարցեր	2383	31.9
սեփականաշնորհում	8	0.1

Տ Ե Ղ Ե Կ Ա Ն Ք

2013Թ. ԱՌԱՋԻՆ ԵՌԱՄՍՅԱԿԻ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԵՎ ՆՐԱՆՑ ԴԻՄՈՒՄՆԵՐԻ, ԲՈՂՈՔՆԵՐԻ ԵՎ ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ստացված 7449 նամակներից մոտ 7.2%-ը եղել են առաջարկություններ, որոնք հիմնականում վերաբերել են ֆինանսական հարցերին: Բողոքները կազմել են շուրջ 32.2%, որոնցով հիմնականում վիճարկվել են դատական ակտեր: Միաժամանակ, դրանց մի մասը բովանդակել է դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդություն:

Նշված նամակներից մոտ 31.9%-ը տարաբնույթ հարցերով դիմումներ են, որոնց գերակշռող մասը՝ մոտ 54.3%-ն առնչվում է ֆինանսական հարցերին, մոտ 6.7%-ն աշխատանքի և աշխատավարձի հարցերին: Ընդ որում՝ ֆինանսական հարցերին վերաբերող դիմումները ստորաբաժանվում են՝

- դիմումատուների կողմից դատարան ներկայացրած գումարների պահանջների վերաբերյալ դիմումներ (որոնք հիմնական մասն են կազմում).
- դատարան դիմելիս պետական տուրքի վճարումից ազատելու վերաբերյալ դիմումներ:

Դիմումատուները դատական ակտի հետ չհամաձայնվելով, իրենց դիմումները հղել են Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությանը՝ խնդրելով աջակցել իրենց դատարանում ներկայացրած պահանջների վերաբերյալ արդար դատական ակտ կայացնելու կամ պետական տուրքից ազատելու հարցերով: Դիմումներին պատասխանվել է, որ Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարությունը նման հարցերին միջամտելու, ինչպես նաև վարչական կարգով պետական տուրքից ազատելու իրավասությամբ օժտված չէ, որ նման վեճերի քննարկման իրավասությունն օրենքով վերապահված է դատարաններին: Դիմումների որոշ մասը՝ 3.1%-ը առնչվում է բնակարանային, 0.7%-ը կոմունալ-կենցաղային, 0.1%-ը շինարարական, հողային վեճերի վերաբերյալ հարցերին:

Իսկ մնացած՝ մոտ 31.9% դիմումները վերաբերում են տարբեր ոլորտներին առնչվող խնդիրներին, որոնց կապակցությամբ ուղարկվել են օրենքով սահմանված սպառիչ պատասխաններ ու տրվել պարզաբանումներ:

Հայտնվում է, որ ստացված դիմումներից 7135ին տրվել է գրավոր, իսկ 213-ին բանավոր պատասխան: Ամփոփումների արդյունքներով տեղեկանքը կազմելու պահին 101-ի քննարկումը դեռ ընթացքի մեջ է:

Աշխատակազմի քարտուղարություն